



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ 0010, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 4, Հեռ. 543 991, Ֆաքս 543 997, E-mail: info@anra.am

No 11-Ն-7 17.02 2012թ.

Ձեր No Հ/Ա-2012/03 13.02. 2012թ

[Մոնիթորինգի տվյալների մասին]

«Գեոթիմ» ՓԲԸ տնօրեն
պարոն Հ.Ալոյանին

Հարգելի պարոն Ալոյան

ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեն կրկին տրամադրում է (առաջին գրությունը՝ 06.12.2011թ. N 11-Մ-63) Վայոց Ձորի «Ամուլսար» կոչվող տեղանքում կոմիտեի մասնագետների կողմից իրականացված ճառագայթային մոնիթորինգի վերաբերյալ եզրակացությունը:

Միաժամանակ հիշեցնում ենք որ նշված տեղանքում գտնվող հանքավայրի շահագործման ժամանակ, հաշվի առնելով հանքավայրում առկա բնական ռադիոակտիվ իզոտոպներով շրջակա միջավայրի աղտոտման հնարավորությունը, «Գեոթիմ» ՓԲԸ-ն պետք է կազմակերպի հանքավայրի հարակից տարածքի ճառագայթային մոնիթորինգ՝ համաձայնացնելով կոմիտեի հետ մոնիթորինգի ծրագիրն ու ծավալը: Մոնիթորինգի տվյալները «Գեոթիմ» ՓԲԸ-ն պետք է եռամսյակը մեկ ներկայացնի կոմիտե:

Առդիր՝ եզրակացություն, 1 էջ:

Հարգանքով՝

Ա.Մարտիրոսյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վայոց Ձորի մարզի «Ամուլսար» կոչվող տեղանքում անցկացված ճառագայթային մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

Վայոց Ձորի մարզի «Ամուլսար» կոչվող տեղանքում «Գեոթիմ» ընկերության կողմից նախատեսվող բաց եղանակով ոսկու արդյունահանման ժամանակ հնարավոր ռադիոակտիվ նյութերով շրջակա միջավայրի աղտոտման ու բնակչության ճառագայթահարման գնահատման նպատակով 2011թ. սեպտեմբերի 22-ին նշված վայրում անցկացվել է կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի մասնագետների կողմից անցկացվել է ճառագայթային մոնիթորինգ: Մոնիթորինգի արդյունքները ցույց են տալիս, որ նշված վայրում բնական գամմա ճառագայթման դոզայի հզորության առավելագույն արժեքը կազմել է 0.12 $\mu\text{Sv/h}$ (ժամում 0.12 միկրոգիլվերտ կամ 12 միկրոռենտգեն): Համեմատության համար պետք է նշել, որ Երևանում բնական գամմա ճառագայթման դոզայի հզորության միջին արժեքը տատանվում է 0.15-0.19 $\mu\text{Sv/h}$ տիրույթում:

Տեղային (in-situ) սպեկտրոմետրիկ չափումը ցույց է տվել օդում ^{226}Ra (ռադիում-226, կիսատրոհման պարբերությունը՝ 1620 տարի) բնական ռադիոակտիվ իզոտոպի առկայություն, որը հանդիսանում է ^{238}U (ուրան-238) բնական ծագում ունեցող ռադիոիզոտոպի տրոհման արգասիք:

Տեղանքից վերցրած հորատհանուքի (տարբեր բարձրությունների համար) լաբորատոր սպեկտրոմետրիկ հետազոտությունները ցույց են տալիս, որ փորձանմուշներում առկա են բնական ռադիոակտիվ իզոտոպներ (ուրանի եւ թորիումի տրոհման արգասիքներ), որոնց տեսակարար ակտիվությունը չի գերազանցում ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 18-ի N1219-Ն «Ճառագայթային անվտանգության նորմերը հաստատելու մասին» որոշման հավելվածի 3-րդ կետի ա) ենթակետով (Աղյուսակ 1) սահմանված կարգավորող հսկողությունից ազատման մակարդակները:

Ելնելով նրանից, որ ոսկի պարունակող հանքաքարի արդյունահանման ժամանակ, կախված տեխնոլոգիական լուծումներից, հնարավոր է հանքաքարից անջատվող ռադիոակտիվ իզոտոպների կուտակում շրջակա տարածքներում, անհրաժեշտ է հանքավայրի շրջակա տարածքում կազմակերպել շրջակա միջավայրի ճառագայթային մոնիթորինգ և մոնիթորինգի արդյունքները պարբերաբար ներկայացնել ՀՀ ԿԱ ՄԱԿ ՊԿ:

ՀՀ ԿԱ ՄԱԿ ՊԿ Ճառագայթային
անվտանգության վարչության պետ



Ա.Մնացականյան